միկրոբիոլոգիան, արդյունաբերական մնացուկների միկրոբիոլոգիական վնասազերծումը և այլն: Քվանտային գեներատորների արտադրությունը ճառագայթությունում առաջիկի դեր խաղաց մի շարք նոր գիտական ուղղությունների ձևավորման գործում, ինչպիսիք են ոչ գծային օպտիկան, քվանտային էլեկտրոնիկան:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտնականները,— նշեց այնուհետև Վ. Հ. Համբարձումյանը,— ուշադիր հետևում են ճառագայթության ժողովրդական տնտեսության զարգացմանը, որոնում իրենց գիտելիքների, փորձի, բնդունակությունների կիրառման նոր ձևեր: Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարը նշեց, որ ժողովրդական տնտեսության հետագա զարգացմանն ըստ ամենայնի նպաստելու առաջավոր գիտնականների նման ձգտումը գիտական հաղորդակցության միակ ճիշտ ուղղությունն է: Մեր բազմազգ սովետական գիտության էլ ավելի բարգավաճման գործում,— վերջում ընդգծեց հեռատեսը,— մեծ նշանակություն ունի երկրի տարբեր ճառագայթությունների գիտնականների բարեկամության, փոխօգնության և համագործակցության կապերի անշեղ բնդլայնումը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի գիտական օջախների հետ:

Այնուհետև գիտաժողովում կարդացվեցին մի շարք զեկուցումներ ՀՍՍՀ ԳԱ սիստեմի հիմնարկներում կատարված գործնական բնույթի աշխատանքների մասին:

«Տնտեսագիտությունը և ժողովրդական տրնտեսության զարգացումը» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյան), «Մեխանիկայի մի քանի հարցեր և ժամանակակից տեխնիկան» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Ա. Համբարձումյան), «Երկրաբանական գիտությունները արտադրությանը» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Ս. Մկրտչյան), «Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտի մի քանի կարևորագույն գիտա-տեխնիկական պրոբլեմները» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Դ. Մ. Մանվելյան), «Կենսաբանական ակտիվ նյութերի սինթեզի հետազոտությունների հիմնական արդյունքները նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Հ. Վարդանյան), «Քիմիայի ինստիտուտի հետազոտությունների արդյունքների գործնական նշանակությունը» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հ. Խ. Բունիաթյան), «Օրգանական քիմիայի ինստիտուտի գիտա-տեխնիկական մշակումները օրգանական սինթեզի և պոլիմերների բնագավառում» (զեկ.՝ քիմ. գիտ. դոկտոր Ս. Դ. Մացոյան), «Հայաստանի անտառային տնտեսության բարելավման ուղղությամբ բուսաբանության ինստիտուտի գործունեության մի քանի արդյունքների մասին» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Հ. Ղազարյան), «Արդյունաբերական ճառագայթնիկայի հնարավորությունները» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ս. Դավթյան), «Ֆիզիոլոգիայի ինստիտուտի հետազոտությունները գործնական տեսանկյունից» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Ա. Բակունց), «Միկրոբիոլոգիայի ինստիտուտի հետազոտությունների գործնական նշանակությունը ժողովրդական տնտեսության զարգացման որոշ բնագավառների համար» (զեկ.՝ կենս. գիտ. դոկտոր Է. Գ. Ափրիկյան), «Թաղիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի գիտական գործունեության արդյունքների արդիական օգտագործման մի քանի հարցեր» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Է. Հ. Միրզաբեկյան), «Քվանտային էլեկտրոնիկան և Հայաստանի արդյունաբերությունը» (զեկ.՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Մ. Լ. Տեր-Միքայելյան):

Գիտական նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանի կոմկուսի և կառավարության ղեկավարները՝ ընկերներ Ա. Ե. Քոչինյանը, Գ. Ա. Ալզումանյանը, Պ. Պ. Անիսիմովը, Ս. Ս. Թովմասյանը, Կ. Ս. Դեմիրճյանը, Լ. Պ. Ղարիբջանյանը, Լ. Ա. Ստեփանյանը:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ԳԻՏԱԿԱՆ ՆՈՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

1973 թ. դեկտեմբերի 21-ին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի մեծ դահլիճում տեղի ունեցավ Երևանի պետական համալսարանի և ԳԱ պատմության ինստիտուտի միացյալ գիտական նստաշրջանը՝ նվիրված բազմավաստակ հայագետ, ակադեմիկոս Հակոբ Համազասպի Մանանդյանի ծննդյան 100-ամյակին: Երևանի պետհամալսարանի ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Դ. Ներսիսյանը բաց անելով գիտական նստաշրջանն ասաց.

— Հ. Մանանդյանը հայ պատմագիտական մտքի ամենափայլուն դեմքերից մեկն է: Նրա գիտական ուսումնասիրություններում նոր լուսաբանություն են ստացել հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության բազմաբիվ կրոնական հարցեր: Մանանդյանը խոր հետք է թողել

հայագիտության գրեթե բոլոր բնագավառներում: Ակադ. Հ. Մանանդյանը նաև հասարակական նշանավոր գործիչ էր, մեր հանրապետության գիտա-ուսումնական աշխատանքի առաջին կազմակերպիչներից մեկը: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել Երևանի ժողովրդական համալսարանի կազմակերպմանը, դառնալով նրա առաջին ռեկտորը:

Այնուհետև լսվեցին մի շարք զեկուցումներ՝ նվիրված ականավոր հայագետի գիտական գործունեությանը: Գիտության վաստակավոր գործիչ, դոցենտ Հ. Դ. Ժամկոչյանը զեկուցեց ակադ. Հակոբ Մանանդյանի կյանքի և գիտական գործունեության մասին: Հակոբ Մանանդյանը ծնվել է 1873 թ. նոյեմբերի 22-ին, Ախալցիխա քաղաքում: 1893 թ. ավարտելով Թբիլիսիի արական դասական գիմնազիան, մեկնում է Գերմանիա՝ բարձրագույն կրթություն ստանալու: Նա ուսանում է Ենայի, Լայպցիգի և Ստրասբուրգի համալսարաններում: Դելբրյուկի, Գելցերի, Հյուբշմանի, Կնապի և այլոց մոտ մասնագիտանում բանասիրության, լեզվաբանության և պատմության մեջ: 1898 թ. էքստերն քննությամբ ավարտում է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը պարսից պատմության, բանասիրության և լեզվի գծով: 1899 թ. նա գալիս է Հայաստան, ուր գիտական աշխատանքի պայմաններ չգտնելով, Էջմիածնի Գևորգյան նեմարանում զբաղվում է ուսուցչությամբ: Հ. Մանանդյանը գիտական-ստեղծագործական աշխատանքի նվիրվեց Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, երբ նոր պայմանները նրա որոնող մտքին հնարավորություն ընձեռեցին ընդգրկել հայագիտության բազմաթիվ հյուղեր: Հ. Մանանդյանը մինչև օրս առաջինն է, որ հումանիտար գիտությունների գծով Հայաստանից ընտրվել է (1939 թ.) ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, իսկ 1943 թ. հաստատվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադիր կազմում:

«Ակադ. Հ. Մանանդյանը որպես բանասեր և աղբյուրագետ» զեկուցումով հանդես եկավ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Հակոբյանը: Հ. Մանանդյանը, ասաց նա, գիտական ասպարեզ մտավ որպես բանասեր և հաստատ դար զբաղվեց աղբյուրագիտությամբ և բանասիրությամբ: Այս բնագավառին են նվիրված նրա մի շարք ուսումնասիրությունները և հրատարակությունները: Սակայն տվյալ ասպարեզում նրա գիտական վաստակի գլուխ-գործոցը հանդիսանում է հունաբան դպրոցի հայերեն հնագույն թարգմանությունների հետազոտմանը նվիրված «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները» աշխատությունը, որը հրապարակվեց 1928 թ.: Հայագիտության մեջ Հ. Մանանդյանը Ն. Ադոնցի հետ փաստորեն հիմք դրեց այդ պրոբլեմի գիտական ուսումնասիրությանը: Հ. Մանանդյանի բանասիրական և աղբյուրագիտական աշխատությունները անբեկանելի կշռույթ ունեն հայագիտության մեջ:

Հայաստանի XI—XV դարերի պատմության՝ Հ. Մանանդյանի ուսումնասիրությանն էր նվիրված պատմ. գիտ. դոկտոր Լ. Բաբայանի զեկուցումը: Այս ժամանակահատվածին են նվիրված 1921 թ. համալսարանում կարդացած նրա դասախոսությունները, որոնք հրատարակվեցին 1922 թ., իսկ այնուհետև մշակելով, նոր աղբյուրների տվյալներով հարստացնելով, Հ. Մանանդյանը զետեղեց դրանք «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» Դ հատորում: Այս պատմաշրջանը Մ. Չամչյանից հետո փաստորեն առաջին անգամ ընդարձակ և քննական մոտեցմամբ մշակման ենթարկեց մեծ պատմաբանը, որի կատարած գործը լուրջ ներդրում է ոչ միայն Հայաստանի, այլև Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների XI—XV դարերի պատմության լուսաբանման գործում:

«Հին Հայաստանի քաղաքական պատմության ուսումնասիրությունը ակադ. Հ. Մանանդյանի աշխատություններում» պրոբլեմի մասին զեկուցեց պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Դ. Սարգսյանը: Նուրջ վեց և կես դար ընդգրկող պատմաշրջանին են նվիրված Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» Ա, Բ հատորները և «Տիգրան Բ և Հռոմը» աշխատությունը: Այստեղ, մինչ այդ անտեսված փոքրասիական հունական սկզբնաղբյուրների լույսի տակ մեծ վարպետությամբ ցույց է տրված, որ Տիգրան Բ-ի պայքարն ընդդեմ Հռոմի ոչ թե ռեակցիա էր ուղղված Արևմուտքի քաղաքակրթության դեմ, այլ հելլենիստական ժամանակաշրջանի տնտեսական, մշակութային կյանքի նվաճումների պաշտպանություն, որ Տիգրան Բ-ը ոչ թե խաղալիք էր Միհրդատ Եվպատորի ձեռքին, այլ պետական մեծ գործիչ, որը վարում էր ներքին և արտաքին ինքնուրույն քաղաքականություն՝ ի նպաստ հելլենիստական Հայաստանի: Ամբողջական և հարուստ է տրված Եռատիգրանյան շրջանը մինչև Արտաշեսյան դինաստիայի անկումը, ապա Արշակունիների հաստատումը, հատկապես երկրորդ և երրորդ դարերի անցուդարձը մինչև Արշակունիների անկումը: Նստաշրջանի վերջում շնորհակալության խոսքով հանդես եկավ ակադ. Հ. Մանանդյանի դուստր Էլեոնորա Մանանդյանը:

Պատմ. գիտ. դոկտոր Վ. ՀԱԿՈԲՅԱՆ